# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N17

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության լիցենզավորման հանձնաժողովի նիստի

<<08>>նոյեմբերի 2021թ. ք.Երևան

2021 թվականի նոյեմբերի 8-ին տեղի ունեցավ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության լիցենզավորման հանձնաժողովի նիստը:

Հանձնաժողովի 7անդամներից նիստին մասնակցում էին՝

| | |
|---|---|
| Ա.Սիմոնյան | Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի տեղակալ ,հանձնաժողովի նախագահ |
| Ա.Ստեփանյան | Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ավտոմոբիլային տրանսպորտի քաղաքականության, լիցենզավորման և թույլտվությունների վարչության լիցենզավորման և թույլտվությունների բաժնի պետ,պատասխանատու քարտուղար |
| Տ.Գասպարյան | Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության երկաթուղային, ջրային, օդային և օդային տրանսպորտի քաղաքականության վարչության երկաթուղային տրանսպորտի քաղաքականության բաժնի գլխավոր մասնագետ, հանձնաժողովի անդամ |
| Ռ.Այվազյան | Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ավտոմոբիլային տրանսպորտի քաղաքականության, լիցենզավորման և թույլտվությունների վարչության ավտոմոբիլային տրանսպորտի քաղաքականության բաժնի գլխավոր մասնագետ, հանձնաժողովի անդամ |

Նիստը նախագահում էր հանձնաժողովի նախագահ՝ Ա. Սիմոնյանը: Նիստից բացակայում էին հանձնաժողովի անդամներ Ա. Պապյանը, Ն. Թևոսյանը:

Նիստն արձանագրում էր հանձնաժողովի պատասխանատու քարտուղար՝ Ա.Ստեփանյանը:

**ՕՐԱԿԱՐԳՈՒՄ**

1.Անհատ ձեռնարկատերերի և կազմակերպությունների կողմից մարդատար-տաքսի ավտոմոբիլներով ուղևորափոխադրումների կազմակերպման լիցենզիա և լիցենզիայի ներդիրներ տրամադրելու համար ներկայացված 1հայտի քննարկում:

2.Անհատ ձեռնարկատերերի և կազմակերպությունների կողմից մարդատար-տաքսի ավտոմոբիլներով ուղևորափոխադրումների կազմակերպման լիցենզիայի ներդիրներ տրամադրելու համար ներկայացված 1 հայտի քննարկում:

3. Անհատ ձեռնարկատերերի և կազմակերպությունների կողմից մարդատար-տաքսի ավտոմոբիլներով ուղևորափոխադրումների կազմակերպման լիցենզիան և լիցենզիայի ներդիրներն ուժը կորցրած ճանաչելու համար ներկայացված 1հայտի քննարկում:

**1.Անհատ ձեռնարկատերերի և կազմակերպությունների կողմից մարդատար-տաքսի ավտոմոբիլներով ուղևորափոխադրումների կազմակերպման լիցենզիաև լիցենզիայի ներդիրներ տրամադրելու համար ներկայացված հայտի քննարկում:**

Քննարկվեց՝

Անհատ ձեռնարկատեր ԳԱԲՐԻԵԼ ԳԱԲՐԻԵԼՅԱՆԻ 2021թ. հոկտեմբերի 8-ի հայտը և հայտին կից ներկայացված փաստաթղթերը և հոկտեմբերի 26-ին իի լրումն ներկայացված փաստաթղթերը՝ անհատ ձեռնարկատերերի և կազմակերպությունների կողմից մարդատար-տաքսի ավտոմոբիլներով ուղևորափոխադրումների կազմակերպման լիցենզիա և լիցենզիայի ներդիր տրամադրելու մասին:

Ա.Ստեփանյանը՝

ներկայացրեց Անհատ ձեռնարկատեր ԳԱԲՐԻԵԼ ԳԱԲՐԻԵԼՅԱՆԻ 2021թ. հոկտեմբերի 8-ի հայտը հայտին կից ներկայացված փաստաթղթերը և հոկտեմբերի 26-ին իի լրումն ներկայացված փաստաթղթերը՝ անհատ ձեռնարկատերերի և կազմակերպությունների կողմից մարդատար-տաքսի ավտոմոբիլներով ուղևորափոխադրումների կազմակերպման լիցենզիա և լիցենզիայի ներդիր տրամադրելու մասին և տեղեկացրեց,որ անհատ ձեռնարկատեր ԳԱԲՐԻԵԼ ԳԱԲՐԻԵԼՅԱՆԻ 2021թ.հոկտեմբերի 8-ին ներկայացված հայտում առկա թերությունները վերացնելու մասին գրությունը հայտատուն ստացել էր 2021 թվականի հոկտեմբերի 20-ին, իսկ ի պատասխան մեր կողմից առաքված գրության՝ հոկտեմբերի 26-ին ներկայացրել է նոր դիմում՝ լրացուցիչ փաստաթղթերով: Հայտատուի կողմից ներկայացված հայտի և հայտին կից ներկայացված փաստաթղթերի և հոկտեմբերի 26-ին իի լրումն ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում պարզվում է,որ հայտատուն ամբողջովին չի վերացրել նշված թերությունները, մասնավորապես առկա են անհամապատասխանություն 10 CU 015 ավտոմոբիլին տրամադրված գազաբալոնային սարքավորումների տեղադրման և բալոնի վկայագրման տեղեկանքներում, իսկ «Պրեմիում գազ» ՍՊԸ-ի կողմից տրամադրված N003194 ՁԱ 2 վկայականում լրացված չի բալոնի արտադրության տարեթիվը և արտադրող կազմակերպության /գործարանի/ անվանումը:

Լիցենզավորման հանձնաժողովի անդամներն ուսումնասիրեցին ներկայացված փաստաթղթերը:

Հարցի քննարկմանը մասնակցեցին լիցենզավորման հանձնաժողովի՝ նիստին մասնակցող բոլոր անդամները, տեղի ունեցավ փակ գաղտնի քվեարկություն, քվեարկության թերթիկները փոխանցվեց լիցենզավորման հանձնաժողովի անդամ պատասխանատու քարտուղար՝ Ա.Ստեփանյանին:

Ա.Ստեփանյանը

Հայտարարեց քվեարկության արդյունքները և արձանագրվեց՝

| ԱՁ ԳԱԲՐԻԵԼ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ | 0կողմ, 4դեմ |
| --- | --- |

Որոշեցին՝ ներկայացված հայտը և հայտին կից ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են «Լիցենզավորման մասին» օրենքի 28-րդ հոդվածին և Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի դեկտեմբերի 11-ի N 1471-Ն որոշման պահանջներին, համաձայն «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի 40-րդ հոդվածի 9-րդ մասի՝ եզրակացությունը ներկայացնել Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարին:

**2. Անհատ ձեռնարկատերերի և կազմակերպությունների կողմից մարդատար-տաքսի ավտոմոբիլներով ուղևորափոխադրումների կազմակերպման լիցենզիայի ներդիրներ տրամադրելու համար ներկայացված հայտի քննարկում:**

Քննարկվեց՝

ԱՁ ԷԴԻԿ ԱՎԱԳՅԱՆԻ 2021թ. հոկտեմբերի 22-ի հայտը և հայտին կից ներկայացված փաստաթղթերը, անհատ ձեռնարկատերերի և կազմակերպությունների կողմից մարդատար-տաքսի ավտոմոբիլներով ուղևորափոխադրումների կազմակերպման լիցենզիայի ներդիր տրամադրելու մասին:

Ա.Ստեփանյանը՝

Ներկայացրեց, որ ԱՁ Էդիկ Ավագյանին 2021թ. հունվարի 29-ին տրամադրվել է անհատ ձեռնարկատերերի և կազմակերպությունների կողմից մարդատար-տաքսի ավտոմոբիլներով ուղևորափոխադրումների կազմակերպման ՏԾ 05439 լիցենզիան, ներկայումս կազմակերպությունը ունի գործող 3 ներդիր, հայտ է ներկայացրել մեկ ներդիրով համալրման:

Լիցենզավորման հանձնաժողովի անդամներն ուսումնասիրեցին ներկայացված փաստաթղթերը:

Հարցի քննարկմանը մասնակցեցին լիցենզավորման հանձնաժողովի՝ նիստին մասնակցող բոլոր անդամները, տեղի ունեցավ փակ գաղտնի քվեարկություն, քվեարկության թերթիկները փոխանցվեց լիցենզավորման հանձնաժողովի անդամ պատասխանատու քարտուղար՝ Ա.Ստեփանյանին:

Ա.Ստեփանյանը

Հայտարարեց քվեարկության արդյունքները և արձանագրվեց՝

| ԱՁ ԷԴԻԿ ԱՎԱԳՅԱՆ | 4կողմ, 0դեմ |
| --- | --- |

Որոշեցին՝ ներկայացված հայտը և հայտին կից ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են «Լիցենզավորման մասին» օրենքի 28-րդ հոդվածին և Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի դեկտեմբերի 11-ի N 1471-Ն որոշման պահանջներին, համաձայն «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի 40-րդ հոդվածի 9-րդ մասի՝ եզրակացությունը ներկայացնել Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարին:

**3. Անհատ ձեռնարկատերերի և կազմակերպությունների կողմից մարդատար-տաքսի ավտոմոբիլներով**

**ուղևորափոխադրումների կազմակերպման լիցենզիան և լիցենզիայի ներդիրներն ուժը կորցրած ճանաչելու համար ներկայացված հայտի քննարկում:**

Քննարկվեց՝

«ԿԻՆԳ ԴԵԼՅՈՒՔՍԵ» ՍՊ ընկերության 2021 թվականի հոկտեմբերի 22-ի դիմումը՝ անհատ ձեռնարկատերերի և կազմակերպությունների կողմից մարդատար-տաքսի ավտոմոբիլներով ուղևորափոխադրումների կազմակերպման ՏԾ N 05430 լիցենզիան և լիցենզիայի N 00001-ից N 00006 ներդիրներն ուժը կորցրած ճանաչելու մասին:

Ա.Ստեփանյանը՝

ներկայացրեց «ԿԻՆԳ ԴԵԼՅՈՒՔՍԵ» ՍՊ ընկերության 2021 թվականի հոկտեմբերի 22-ի դիմումը՝ անհատ ձեռնարկատերերի և կազմակերպությունների կողմից մարդատար-տաքսի ավտոմոբիլներով ուղևորափոխադրումների կազմակերպման ՏԾ N 05430 լիցենզիան և լիցենզիայի N 00001-ից N 00006 ներդիրներն ուժը կորցրած ճանաչելու մասին:

Լիցենզավորման հանձնաժողովի անդամներն ուսումնասիրեցին դիմումը և դիմումին կից ներկայացված փաստաթղթերը:

Հարցի քննարկմանը մասնակցեցին լիցենզավորման հանձնաժողովի՝ նիստին մասնակցող բոլոր անդամները, տեղի ունեցավ փակ գաղտնի քվեարկություն, քվեարկության թերթիկները փոխանցվեց լիցենզավորման հանձնաժողովի անդամ՝ պատասխանատու քարտուղար՝ Ա.Ստեփանյանին:

Ա.Ստեփանյանը

Հայտարարեց քվեարկության արդյունքները և արձանագրվեց՝

| | |
|---|---|
| «ԿԻՆԳ ԴԵԼՅՈՒՔՍԵ» ՍՊԸ | 4 կողմ, 0 դեմ |

Որոշեցին՝ ըստ «Լիցենզավորման մասին» օրենքի 40-րդ հոդվածի 9-րդ մասի՝ եզրակացությունը ներկայացնել Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարին:

ՀՀ տարածքային կառավարման և
ենթակառուցվածքների նախարարության
լիցենզավորման հանձնաժողովի
նախագահ Ա.Սիմոնյան

ՀՀ տարածքային կառավարման և
ենթակառուցվածքների նախարարության
լիցենզավորման հանձնաժողովի պատասխանատու
քարտուղար Ա.Ստեփանյան